

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

### Եվրասիական տնտեսական միության շրջանակներում թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի հետ գործառնությունների իրականացման առանձնահատկությունների մասին

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները, այսուհետ՝  
անդամ պետություններ,

հիմք ընդունելով 2014 թվականի մայիսի 29-ի՝ Եվրասիական տնտեսական  
միության մասին պայմանագիրը,

Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) շրջանակներում  
թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի ազատ շրջանառության  
ապահովման պայմանների ստեղծման նպատակով,

Միության շրջանակներում թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի  
գործառնությունների իրականացման ոլորտում արդյունավետ միջոցառումների  
մշակման և անդամ պետությունների մրցակցային առավելություններին և դրանց  
փոխգործակցությանն ուղղված փոխշահավետ առևտրատնտեսական  
մեխանիզմների ձևավորման նպատակով,

համաձայնեցին հետևյալի մասին.

### Հոդված 1

Սույն Համաձայնագրի նպատակներով կիրառվում են հասկացություններ՝  
հետևյալ նշանակությամբ.

**հետազոտում**՝ այն մետաղի և դրա ձուլվածքի քիմիական բաղադրության  
որոշում, որոնցից պատրաստված է արտադրանքը, այդ թվում՝ տվյալ արտադրանքի  
մասնատում նախատեսող մեթոդների կիրառման եղանակով,

**Թանկարժեք մետաղների գտարկում՝** արդյունահանված թանկարժեք մետաղների մաքրման գործընթաց խառնուրդներից և հարակից քիմիական տարրերից՝ թանկարժեք մետաղների պարունակությունը հասցնելով այն հատկանիշներին, որոնք համապատասխանում են միջպետական ստանդարտների պահանջներին և (կամ) անդամ պետությունների պետական (ազգային) ստանդարտներին և (կամ) անդամ պետությունների տարածքներում գործող տեխնիկական պայմաններին և (կամ) որակի միջազգային չափանիշներին՝ ընդունված Լոնդոնի՝ Թանկարժեք մետաղների ասոցիացիայի (LBMA) և Լոնդոնի՝ պլատինի և պալադիումի (LPPM) շուկայի մասնակիցների կողմից,

**Թանկարժեք քարերի արդյունահանում՝** թանկարժեք քարերի արդյունահանում հիմնական, ցրոնային և տեխնաժին հանքավայրերից, ինչպես նաև թանկարժեք քարերի սորտավորում, նախնական դասակարգում և նախնական գնահատում,

**Թանկարժեք մետաղների արդյունահանում՝** թանկարժեք մետաղների արդյունահանում հիմնական (հանքաքարի), ցրոնային և տեխնաժին հանքավայրերից՝ թանկարժեք մետաղներ պարունակող խտանյութերի և այլ միջանկյալ նյութերի ստուգմամբ,

**Թանկարժեք քարեր՝** բնական ադամանդ, զմրուխտ, սուտակ, շափյուղա և ալեքսանդրիտներ, ինչպես նաև բնական մարգարիտներ՝ անմշակ (բնական) և մշակված, բացառիկ սաթե գոյացություններ: Թանկարժեք քարերի բնութագրերով (հատկություններով) արհեստական ծագման նյութերը չեն կարող դասակարգվել որպես թանկարժեք քարեր,

**Թանկարժեք մետաղներ՝** ոսկի, արծաթ, պլատին և պլատինե խմբի մետաղներ (պալադիում, իրիդիում, ռոդիում, ռուտենիում և օսմիում), որոնք կարող են գտնվել ցանկացած վիճակում, տեսքով (այդ թվում՝ բնակտորային և զտարկված տեսքով), ինչպես նաև հումքի, ձուլվածքների, կիսաֆաբրիկատների, արդյունաբերական արտադրանքի, քիմիական միացությունների, արտադրանքի

(իրերի), այդ թվում՝ ոսկերչական և այլ իրերի, մետաղադրամների, ջարդոնների և թափոնների տեսքով,

**անվանանիշ՝** արտադրողի նշան, որի դրոշմվածքը դրվում է պատրաստված ոսկերչական և այլ իրերի վրա,

**թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի օգտագործում՝** թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի կիրառում արտադրական, ֆինանսական, գիտական և սոցիալ-մշակութային նպատակով,

**հանքային հումք՝** ընդերքից և հիմնական հանքավայրերից արդյունահանված թանկարժեք մետաղներ պարունակող հանքաքար, ավազ՝ փխրուն հանքավայրերից, հանքաքար և ավազ՝ տեխնաժին հանքավայրերից, խտանյութ, ոսկու և լուսնուսկու սիկ, Դորեի ձուլվածք, կաթոդային մետաղներ և ցինկե նստվածքներ, ինչպես նաև արդյունաբերական միջոցներով արդյունահանվող՝ թանկարժեք մետաղներ պարունակող բազմամետաղական (համալիր) հանքաքարեր,

**հարգադրոշմում՝** ոսկերչական և այլ իրերի վրա հարգի դրոշմում,

**թանկարժեք մետաղների ջարդոն և թափոններ՝** արտադրանք (իրեր) թանկարժեք մետաղներից և դրանց ձուլվածքներից, դրա մասեր, որոնք դարձել են անպիտան կամ կորցրել են իրենց սպառողական հատկանիշները և (կամ) գործառնական նշանակությունը, չվերականգնվող խոտան, որը առաջացել է (իրերի) արտադրության ընթացքում, ինչպես նաև թանկարժեք մետաղներ պարունակող հումքի, նյութերի, կիսաֆաբրիկատների մնացորդներ, որոնք առաջացել են արտադրության և կամ օգտագործման ընթացքում, և որոնք հիմնականում օգտագործվել են թանկարժեք մետաղներ արդյունահանելու համար,

**թանկարժեք քարերի մշակում՝** մեխանիկական, ֆիզիկական, քիմիական կամ այլ ազդեցություն թանկարժեք քարերի վրա դրանց ֆիզիկական վիճակը (ձևը, գույնը, որակը) փոփոխելու նպատակով: Մշակումը իր մեջ ներառում է ինչպես

տարբեր նպատակներով թանկարժեք քարերից կիսաֆաբրիկատ և պատրաստի իրերի արտադրությունը, այնպես էլ դրանց տեսակի բարելավումը,

**հարգորոշում՝** ոսկերչական և այլ իրերի մեջ թանկարժեք մետաղների ձուլվածքի հարգի որոշում կամ հաստատում,

**թանկարժեք քարերի թափոններ՝** թանկարժեք քարերի մնացորդներ՝ բեկորների և ջարդվածքի տեսքով, որոնք առաջացել են թանկարժեք քարերի մշակման ժամանակ, ոսկերչական և այլ իրերի, տեխնիկական նշանակության իրերի արտադրության և օգտագործման ընթացքում, և չեն կարող օգտագործվել նշված իրերի արտադրության համար,

**հարգ՝** քիմիապես մաքուր թանկարժեք մետաղի զանգվածային խմբաքանակների քանակական պարունակությունը թանկարժեք մետաղի համաձուլվածքի մեկ հազար կշռային միավորի մեջ,

**հարգադրոշմ՝** անդամ պետության օրենսդրությամբ սահմանված նմուշի նշան, որը դրվում է թանկարժեք մետաղներից պատրաստված ոսկերչական և այլ իրերի վրա, և որը հավաստում է այդ իրերի մեջ պարունակվող թանկարժեք մետաղի հարգը,

**թանկարժեք մետաղների արտադրություն՝** թանկարժեք մետաղ պարունակող արդյունահանված հանքաքարերից, խտանյութերից և այլ կիսաֆաբրիկատներից, թանկարժեք մետաղներ պարունակող ջարդոնից և թափոնից թանկարժեք մետաղների ստացում, ինչպես նաև թանկարժեք մետաղների զտում,

**վերականգնված թանկարժեք քարեր՝** թանկարժեք քարեր, որոնք հանվել են մշակված կամ այլ պատճառներով օգտագործումից հանված գործիքներից և տեխնիկական նշանակության այլ իրերից,

**«արդյունահանման սուբյեկտներ»՝** անդամ պետության տարածքում թանկարժեք մետաղների արդյունահանում իրականացնող կազմակերպություններ, որոնք հանդիսանում են տվյալ անդամ պետության ռեզիդենտ,

**նուկերչական իրեր և այլ ապրանքներ՝** թանկարժեք մետաղներից և դրանց համաձուլվածքներից պատրաստված իրեր, որոնք ունեն նուկերչական և այլ իրերի հարգորոշման, հետազոտման և հարգադրոշման Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից հաստատված պահանջներով սահմանված նվազագույն հարգից ոչ պակաս հարգ, այդ թվում՝ թանկարժեք քարերից, բնական կամ արհեստական ծագման նյութերից, բացառությամբ էմիսիա անցած (այդ թվում՝ շրջանառությունից հանված) մետաղադրամների, ինչպես նաև պետական պարգևների, ներդիրներով տարբեր տեսակի դեկորատիվ մշակման արդյունքում պատրաստված իրեր կամ իրեր՝ պատրաստված թանկարժեք մետաղներից և (կամ) թանկարժեք քարերից ներդիրներով դեկորատիվ մշակմամբ տարբեր տեսակի բնական կամ արհեստական ծագմամբ նյութերից:

Սույն Համաձայնագրում օգտագործվող այլ հասկացությունները կիրառվում են 2014 թվականի մայիսի 29-ի Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրով, Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերով սահմանված իմաստներով:

## **Հոդված 2**

1. Սույն Համաձայնագիրը Միության շրջանակներում սահմանում է թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի գործառնությունների առանձնահատկությունները և տարածվում իրավաբանական և որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձանց (այսուհետ՝ անհատ ձեռնարկատեր) գործունեության հետ կապված իրավական հարաբերությունների վրա՝ թանկարժեք քարերի և թանկարժեք մետաղների գործառնություններ իրականացնելու նպատակով:

2. Սույն Համաձայնագրի նպատակներով, թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի հետ գործառնությունները նշանակում են.

ա) գործողություններ՝ կապված թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի (թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի շրջանառության) սեփականության և այլ գույքային իրավունքների փոխանցման հետ, այդ թվում՝ թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի օգտագործումը գրավի տեսքով,

բ) ֆիզիկական վիճակի կամ ցանկացած նյութում արդյունահանման, թանկարժեք մետաղների արտադրության, թանկարժեք քարերի արդյունահանման, թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի հետագա մշակման (վերամշակման) և օգտագործման ժամանակ թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պարունակության փոփոխություններ,

գ) Միության ապրանքներ հանդիսացող թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի տեղափոխում Միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքով, և (կամ) ծովով, ինչպես նաև Միության մաքսային տարածքով (այդ թվում՝ թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի տեղափոխում պահպանման վայրեր, ֆոնդեր և պաշարներ), դրանց պահպանումը և ցուցադրումը,

դ) Միության մաքսային տարածք թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի ներմուծում և Միության մաքսային տարածքից արտահանում՝ Միության իրավասության մեջ գտնվող՝ սահմանված իրավական ակտերին համապատասխան:

3. Սույն Համաձայնագիրը չի կիրառվում հետևյալ գործառնությունների նկատմամբ.

ա) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից անձնական, ընտանեկան, տնային կամ այլ՝ ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված ոսկերչական և այլ իրերի իրացում: Այդպիսի գործողությունների իրականացման Կարգը սահմանվում է այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում դրանք իրականացվում են,

բ) ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված՝ ֆիզիկական անձանց միջև ոսկերչական և այլ իրերի, ինչպես նաև երեսակված թանկարժեք

քարերի հետ իրականացվող գործառնություններ: Այդպիսի գործողությունների իրականացման Կարգը սահմանվում է այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում դրանք իրականացվում են,

գ) գործողություններ թանկարժեք քարերի հետ, որոնք պիտանի չեն ոսկերչական և այլ իրերի պատրաստման համար: Թանկարժեք քարերի դասակարգումը, որոնք պիտանի չեն ոսկերչական և այլ իրերի պատրաստման համար, իրականացվում է ըստ սույն Համաձայնագրի հմ. 1 հավելվածի,

դ) գործողություններ գործիքներով, սարքերով և սարքավորումներով, որոնք պարունակում են թանկարժեք մետաղներ և թանկարժեք քարեր: Այդպիսի գործողությունների իրականացման Կարգը սահմանվում է այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում դրանք իրականացվում են,

ե) գործառնություններ՝ կապված Միության մաքսային տարածքից Միության անդամ չհանդիսացող միության տարածք թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի արտահանման հետ և այդպիսի պետությունների տարածքներից Միության մաքսային տարածք ներմուծման հետ,

զ) Անդամ պետությունների ազգային (կենտրոնական) բանկերի կողմից թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի և հանքային հումքի հետ իրականացվող գործողություններ: Այդպիսի գործողությունների իրականացման Կարգը սահմանվում է այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում դրանք իրականացվում են:

### **Հոդված 3**

Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի արդյունահանումը անդամ պետություններում իրականացվում է այն անդամ պետության օրենսդրության համաձայն, որի տարածքում իրականացվում է համապատասխան արդյունահանումը:

#### Հոդված 4

1. Թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված արտադրանքի (հրերի) արտադրությունը, թանկարժեք քարերի մշակումը, ինչպես նաև թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի օգտագործումը և շրջանառումը Միության շրջանակներում իրականացվում է անդամ պետությունների օրենսդրության համապատասխան՝ հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները.

ա) իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը, որոնք իրականացնում են թանկարժեք մետաղների արտադրություն, թանկարժեք քարերի մշակում, թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի շրջանառություն, արտադրական նպատակներով, ինչպես նաև անդամ պետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում թանկարժեք մետաղների օգտագործում, պետք է կանգնեն հատուկ հաշվառման (հաշվառման) պետք է ընդգրկվեն թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի, այդ թվում՝ թանկարժեք մետաղներ պարունակող հանքային հումքի հետ գործառնություն իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի ռեեստրում, որի վարումն իրականացվում է անդամ պետության օրենսդրության համապատասխան լիազոր մարմնի կողմից (կազմակերպության) կողմից, և (կամ) ունենան հատուկ թույլտվության (լիցենզիա) թանկարժեք մետաղների և (կամ) թանկարժեք քարերի հետ գործունեություն իրականացնելու իրավունքի վերաբերյալ,

բ) իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը, որոնք իրականացնում են թանկարժեք մետաղների արդյունահանում, հանքային հումքի իրացում կամ հանքային հումքից, հանքային հումքի վերամշակման արդյունքում ստացված արտադրանքից և թափոններից թանկարժեք մետաղների արտադրություն, (բացառությամբ թանկարժեք մետաղների բացառիկ բնակտորների և բնակտորների, որոնք ենթակա չեն զտարկման), անհրաժեշտ վերամշակումից հետո պետք է իրականացնեն հետևյալ գործողություններից մեկը.



իրականացնել թանկարժեք մետաղների գտարկում ինքնուրույն այն դեպքում, եթե իրենք իրավունք ունեն իրականացնելու գործունեության այդ տեսակը՝ անդամ պետության օրենսդրության համապատասխան,

ուղարկել գտարկման հանքային հումքը, հանքային հումքի վերամշակման արդյունքում ստացված արտադրանքներն ու թափոնները, համաձայն պայմանագրի (կոնտրակտի), այն կազմակերպություններին, որոնք ունեն, անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, գործունեության այդ տեսակը իրականացնելու իրավունք,

իրականացնել անդամ պետությունների տարածքներում թանկարժեք մետաղներ պարունակող հանքային հումքի հետ գործառնություններ մինչև գտարկումը՝ համաձայն մինչև գտարկումը թանկարժեք մետաղներ պարունակող հանքային հումքի հետ գործառնություններ իրականացնելու մասին Կարգի, սույն Համաձայնագրի 2-րդ հավելվածին համապատասխան,

արտահանել հանքային հումքը, հանքային հումքի վերամշակման արդյունքում ստացված արտադրանքներն ու թափոնները Միության մաքսային տարածքից՝ համաձայն Միության իրավունքի մաս կազմող արտահանման կարգը սահմանող ակտերի:

Բնակտորների դասին թանկարժեք մետաղների բնակտորների դասակարգման կարգը, որոնք ենթակա չեն գտարկման, սահմանվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից (այսուհետ՝ Հանձնաժողով):

գ) Մինչև գտարկումը հանքային հումքի և (կամ) չվերամշակված թանկարժեք քարերի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման, ինչպես նաև որպես գրավ դրանց օգտագործման հետ կապված գործարքները ենթակա են հաշվառման: Այդպիսի գործարքների հաշվառման Կարգը սահմանվում է անդամ պետության օրենսդրությամբ:

2. Թանկարժեք մետաղների գտարկումը իրենից չի ենթադրում թանկարժեք քարերի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում, եթե պայմանագրի

(կոնտրակտի) պայմաններով վերապահված չէ սեփականության իրավունքի այդպիսի փոխանցում, և եթե դա չի հակասում այն անդամ պետության օրենսդրությանը, որի տարածքում գրանցված են իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը, որոնք զտարկման են հանձնել հանքային հումքը կամ դրա վերամշակման արդյունքում ստացված արտադրանքներն ու թափոնները:

3. Անդամ պետության օրենսդրությամբ կարող են նախատեսվել.

ա) պետության և (կամ) կազմակերպության արտոնյալ իրավունք թանկարժեք մետաղներ և թանկարժեք քարեր ձեռք բերելու համար՝ թանկարժեք մետաղների զտարկման, թանկարժեք մետաղների և (կամ) թանկարժեք քարերի ոսկեարժութային ակտիվների (պահուստների, ռեզերվների) և (կամ) այլ պետական ֆոնդերի համալրման նպատակներով,

բ) պահանջներ և պայմաններ, որոնք առնչվում են թանկարժեք մետաղների արտադրությանը, այդ թվում՝ այն թանկարժեք մետաղների զտարկում իրականացնելուն, որոնք ստացվել են տվյալ անդամ պետության տարածքում արդյունահանված հանքային հումքից, այն կազմակերպություններում, որոնք, անդամ պետության օրենսդրության համապատասխան, իրավունք ունեն իրականացնելու տվյալ տեսակի գործունեություն,

գ) թանկարժեք մետաղների, այդ թվում՝ թանկարժեք մետաղների թափոնների և ջարդոնի մատակարարում պետական պատվերով, և թանկարժեք քարերի մատակարարում պետության կարիքների համար:

4. Անդամ պետության օրենսդրությամբ այն կազմակերպություններում, որոնցում իրականացվել են մյուս անդամ պետության տարածքում արդյունահանված հանքային հումքի վերամշակում կամ զտարկում, չեն կարող սահմանվել խտրական նորմեր և այնպիսի նորմեր, որոնք սահմանափակում են վերամշակված կամ զտարկված թանկարժեք մետաղների վերադարձը այդ մյուս անդամ պետության տարածք:

## Հոդված 5

1. Իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը իրականացնում են պարտադիր հաշվառում.

ա) թանկարժեք մետաղների՝ ըստ թանկարժեք մետաղի անվան, զանգվածի և պարունակության (հարգի),

բ) թանկարժեք քարերի՝ ըստ անվան, զանգվածի, դասակարգման նկարագրերի՝ համաձայն Միության շրջանակներում կիրառվող նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի, թանկարժեք քարերի դասակարգման և արժեքային նկարագրերը սահմանելու նպատակով:

2. Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի հաշվառման և հաշվետվության վարման, պահպանման և տեղափոխման (փոխադրման) կարգերը սահմանվում են այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում իրականացվում են թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի արդյունահանումը, արտադրությունը, օգտագործումն ու շրջանառությունը:

## Հոդված 6

1. Թանկարժեք մետաղների, չմշակված թանկարժեք քարերի, բացառիկ բնակտորների և զտարկման ոչ ենթակա բնակտորների հետ գործարքներ իրականացնելիս պայմանագրային (կոնտրակտային) գնի ձևավորումը իրականացվում է անդամ պետության օրենսդրության համաձայն:

2. Թանկարժեք մետաղների բնակտորները, որոնք չեն պատկանում բացառիկ բնակտորների դասին, և այդպիսի բնակտորների հանքաբանական հավաքածուի նմուշները կարող են իրացվել դրանք արդյունահանող սուբյեկտների կողմից՝ այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով, որի տարածքում նրանք իրացվում են, բացառությամբ սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածի 4-րդ կետում նշված դեպքի:

## **Հոդված 7**

Չմշակված բնական ադամանդների տեղափոխումը մի անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք իրականացվում է չմշակված բնական ադամանդների սերտիֆիկացման միջազգային սխեմայի պահանջներին համապատասխան: Չմշակված բնական ադամանդների սերտիֆիկացման միջազգային սխեմայի սերտիֆիկատների ձևակերպման և տրման կարգը (Քիմբերլիի գործընթացի սերտիֆիկատ), ինչպես նաև չմշակված բնական ադամանդների սերտիֆիկացման միջազգային սխեմայի պահանջների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու կարգը սահմանվում են անդամ պետության օրենսդրությամբ:

## **Հոդված 8**

1. Միության շրջանակներում չի թույլատրվում գործարքներ իրականացնել այն թանկարժեք քարերի հետ, որոնց դասակարգման նկարագրերը սահմանված չեն:

2. Թանկարժեք քարերի դասակարգման և արժեքային նկարագրերի սահմանումն իրականացվում է թանկարժեք քարերի սորտավորման, նախնական դասակարգման և նախնական գնահատման (անդամ պետության տարածքում արդյունահանելու դեպքում), նույնականացման (Միության անդամ պետություն չհանդիսացող պետությունների տարածքներից Միության մաքսային տարածք ներմուծելու դեպքում) գործընթացում, ինչպես նաև դրանց մշակումն ավարտելու ժամանակ՝ Միության շրջանակներում կիրառվող նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի հիման վրա:

3. Անդամ պետության տարածքում արդյունահանված՝ չմշակված թանկարժեք քարերի սորտավորումը, նախնական դասակարգումը և նախնական գնահատումն

իրականացվում են դրանք արդյունահանող սուբյեկտների կամ մարմինների (կազմակերպությունների) կողմից, որոնք լիազորված են իրականացնելու այդպիսի գործառնություններ այն անդամ պետության օրենսդրության համապատասխան, որի տարածքում արդյունահանվել են չմշակված թանկարժեք քարերը:

### **Հոդված 9**

1. Երեսակված թանկարժեք քարերի վաճառքը (հրացումը) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից ֆիզիկական անձանց իրականացվում է համաձայն մանրածախ առքուվաճառքի պայմանագրի՝ յուրաքանչյուր քարի կամ միասնական փաթեթում ներառված 2 և ավելի երեսակված թանկարժեք քարերի խմբաքանակի սերտիֆիկատի (վկայականի) առկայության դեպքում:

2. Սերտիֆիկատը (վկայականը) տրվում է անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով հավատարմագրված մարմնի (կազմակերպության) կողմից:

3. Երեսակված թանկարժեք քարերի սերտիֆիկացումը (վկայագրումը) իրականացվում է անդամ պետության օրենսդրության համաձայն:

4. Այն բնակտորների, որոնք ենթակա չեն զտարկման, ինչպես նաև հումքի (բնական) տեսքով չմշակված թանկարժեք քարերի վաճառքը (հրացումը) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից ֆիզիկական անձանց չի թույլատրվում:

5. Այն բնակտորները, որոնք ենթակա չեն զտարկման, կարող են օգտագործվել որպես ներդիրներ (բարձիկներ, կախազարդեր) ոսկերչական և այլ իրերում:

### **Հոդված 10**

1. Այն իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը, որոնց մոտ կուտակվում են թանկարժեք մետաղների ջարդոն և թափոններ, թանկարժեք քարերի թափոններ, իրականացնում են նշված ջարդոնի և թափոնների հավաքում և պարտադիր հաշվառում, եթե դա նախատեսված է անդամ պետության օրենսդրությամբ: Թանկարժեք մետաղների ջարդոնի և թափոնների ու թանկարժեք քարերի թափոնների հաշվառման և հաշվետվության վարման, պահպանման և տեղափոխման (փոխադրման) կարգերը սահմանվում են այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում դրանք ձևավորվել են:

2. Սեփական արտադրությունում հավաքված թանկարժեք մետաղների ջարդոնը և թափոնները, թանկարժեք քարերի թափոնները.

ա) մշակվում (վերամշակվում) են ինքնուրույն դրանք հավաքող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից՝ սեփական արտադրությունում երկրորդ անգամ օգտագործելու համար,

բ) ենթարկվում են զտարկման (միայն թանկարժեք մետաղների ջարդոնի և թափոնների վերաբերյալ) այն դեպքում, եթե իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը, անդամ պետության օրենսդրության համապատասխան, կա՛մ ուղարկում են զտարկման, կա՛մ պայմանագրի (կոնտրակտի) հիման վրա ուղարկում են զտարկման այն կազմակերպություններ, որոնք, անդամ պետության օրենսդրության համաձայն, իրավունք ունեն իրականացնելու տվյալ տեսակի գործունեություն,

գ) իրացվում են անդամ պետությունների՝ թանկարժեք մետաղների և (կամ) թանկարժեք քարերի պետական ֆոնդերում, անդամ պետության օրենսդրության համապատասխան, կամ իրացվում են այլ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի,

դ) արտահանվում են Միության մաքսային տարածքից՝ Միության իրավասության մեջ գտնվող ակտերով սահմանված կարգով:

3. Անդամ պետության օրենսդրությամբ կարող է սահմանվել.

ա) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հավաքած թանկարժեք մետաղների ջարդոնի և թափոնների զտարկման պարտավորությունը սեփական արտադրությունում, այդ անդամ պետության կազմակերպություններում, որոնք, անդամ պետության օրենսդրության համապատասխան, իրավունք ունեն իրականացնելու տվյալ տեսակի գործունեություն,

բ) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից ձեռք բերված թանկարժեք մետաղների ջարդոնի և թափոնների զտարկման պահանջներն ու պայմանները այդ անդամ պետության կազմակերպություններում, որոնք, անդամ պետության օրենսդրության համապատասխան, իրավունք ունեն իրականացնելու տվյալ տեսակի գործունեություն:

4. Անդամ պետությունների՝ թանկարժեք մետաղների և (կամ) թանկարժեք քարերի պետական ֆոնդերում գտնվող թանկարժեք մետաղների ջարդոնի և թափոնների, թանկարժեք քարերի թափոնների շրջանառությունը իրականացվում է անդամ պետությունների օրենսդրության համապատասխան:

5. Թանկարժեք մետաղների ջարդոն և թափոններ ձեռք բերող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը պարտավոր են իրականացնել հետևյալ գործողություններից մեկը.

ա) ինքնուրույն իրականացնել թանկարժեք մետաղների ջարդոնի և թափոնների զտարկում այն դեպքում, եթե ունեն գործունեության այդպիսի տեսակը իրականացնելու իրավունք՝ անդամ պետության օրենսդրության համապատասխան,

բ) թանկարժեք մետաղների ջարդոնը և թափոնները, համաձայն պայմանագրի (կոնտրակտի), զտարկման ուղարկել այն կազմակերպություններ, որոնք, անդամ պետությունների օրենսդրության համապատասխան, ունեն գործունեության այդպիսի տեսակը իրականացնելու իրավունք,

գ) փոխանցել կամ իրացնել թանկարժեք մետաղների ջարդոնը և թափոնները այլ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին հետագա

զտարկման համար մշակման (վերամշակման) նպատակով այն դեպքում, եթե դա նախատեսված է անդամ պետության օրենսդրությամբ,

դ) իրացնել թանկարժեք մետաղների ջարդոնը և թափոնները անդամ պետությունների թանկարժեք մետաղների և (կամ) թանկարժեք քարերի պետական ֆոնդերում՝ անդամ պետությունների օրենսդրության համապատասխան,

ե) արտահանել թանկարժեք մետաղների ջարդոնը և թափոնները Միության մաքսային տարածքից Միության իրավասության մեջ գտնվող ակտերով սահմանված կարգով:

6. Ջարդոնից և թափոններից ստացված թանկարժեք մետաղների, ինչպես նաև, իրենց տեսակից և վիճակից կախված, վերաօգտագործված թանկարժեք քարերի օգտագործումն ու շրջանառությունն իրականացվում է սույն Համաձայնագրին համապատասխան:

7. Անդամ պետության օրենսդրությամբ, որի կազմակերպություններում թանկարժեք մետաղներ են արդյունահանվել մյուս անդամ պետության տարածքից տեղափոխված ջարդոնից և թափոններից, չեն կարող սահմանվել նորմեր, որոնք կսահմանափակեն այդ թանկարժեք մետաղների վերադարձը այն անդամ պետություն, որի տարածքից տեղափոխվել են այդ ջարդոնն ու թափոնները:

## **Հոդված 11**

1. Միության մաքսային տարածք ներմուծված և «բացթողում ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգին համապատասխան բաց թողած ոսկերչական և այլ իրերը պետք է համապատասխանեն այն հարգերին, որոնք սահմանված են ոսկերչական և այլ իրերի նմուշահանման, հետազոտման և դրոշմման պահանջներով:

Ոսկերչական և այլ իրերի նմուշահանման, հետազոտման և դրոշմման պահանջները հաստատվում են Հանձնաժողովի Խորհրդի կողմից:



Սույն կետի առաջին պարբերությունում նշված ոսկերչական և այլ իրերը ենթակա են դրոշմավորման այն անդամ պետության հարգադրոշմով, որի տարածք դրանք ներմուծվել են, նշված պահանջներին համապատասխան, բացառությամբ այն դեպքերի, որոնք նախատեսված են սույն հոդվածի 4-րդ կետով:

2. Ոսկերչական և այլ իրերը, որոնց նկատմամբ գործում են միջազգային պայմանագրեր, որոնք նախատեսում են անդամ պետության և Միության անդամ չհանդիսացող պետության հարգադրոշմի փոխադարձ ճանաչում, որոնք ներմուծվել են Միության մաքսային տարածք և բաց թողնվել տվյալ անդամ պետության տարածքում ներքին սպառման համար բացթողման մաքսային ընթացակարգի համաձայն, վաճառքի (իրացման) նպատակով մյուս անդամ պետության տարածք տեղափոխելիս ենթակա են դրոշմավորման այն անդամ պետության հարգադրոշմով, որի տարածքից այդ իրերը տեղափոխվել են:

3. Անդամ պետության տարածքում պատրաստված ոսկերչական ու այլ իրերը պետք է համապատասխանեն սույն հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերությունում նշված պահանջներով սահմանված դրոշմներին, ունենան այն անդամ պետության անվանական դրոշմի դրոշմվածք և հարգորոշիչ դրոշմ, որի տարածքում այդ ոսկերչական ու այլ իրերը պատրաստվել են, բացառությամբ այն դեպքերի, որոնք նախատեսված են սույն հոդվածի 4-րդ կետով:

4. Պարտադիր նմուշահանման, հետազոտման ու դրոշմման ենթակա չեն.

ա) պետական մրցանակները, մետաղադրամները, ոսկերչական ու այլ կենցաղային արտադրանքի մնացորդները, որոնք ներկայացված են տարբեր ձևերով,

բ) ոչ թանկարժեք մետաղներից պատրաստված գրիչների թանկարժեք մետաղներից փետուրները,

գ) մակագրի համար նախատեսված թանկարժեք մետաղներից թիթեղների կամ թանկարժեք մետաղներից պատրաստված գրքերի, ալբոմների, թղթապանակների և նմանատիպ իրերի կազմերը,

դ) ոսկերչական ու այլ իրերը, որոնք ունեն պատմական կամ հնագիտական նշանակություն, հայրենական և օտարերկրյա արտադրության թանկարժեք մետաղներից գտարկված ձուլակտորները, թանկարժեք մետաղների բնակտորները, թերթավոր ոսկին, թերթավոր արծաթը, մանր նախշերը և մանր զարդերը, որոնք պատրաստված են իրերի վրա պլատինից, ոսկուց, պալադիումից և/կամ արծաթից դրվագազարդման միջոցով, սարքերը, լաբորատոր տարաները և թանկարժեք մետաղից պատրաստված՝ գիտական, արտադրական ու բժշկական նպատակների համար նախատեսված այլ իրերը:

5. Այն ոսկերչական և այլ իրերը, որոնք արտադրված են անդամ պետության տարածքում, նախատեսված են Միության անդամ չհանդիսացող պետություններ արտահանման համար, ենթակա չեն նմուշահանման, հետազոտման ու դրոշմման այն դեպքում, եթե դա նախատեսված է այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում պատրաստվել են այդպիսի իրերը:

6. Ոսկերչական և այլ իրերը, որոնք դրոշմավորված են հարգադրոշմով մի անդամ պետության տարածքում, մյուս անդամ պետության տարածք տեղափոխվելու դեպքում ենթակա չեն լրացուցիչ նմուշահանման, հետազոտման ու դրոշմման:

7. Իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը, որոնք իրականացնում են ոսկերչական և այլ իրերի պատրաստման (արտադրության) գործունեություն, պետք է ունենան անվանական դրոշմ, որի դրոշմվածքը դրվում է իրենց պատրաստած բոլոր ոսկերչական և այլ իրերի վրա:

8. Ոսկերչական և այլ իրերը, որոնց հարգադրոշմը ցածր է համապատասխան թանկարժեք մետաղի համար սահմանված նվազագույն հարգադրոշմից, ինչպես նաև այն իրերը, որոնք պատրաստված են ոչ թանկարժեք մետաղների կիրառմամբ, ենթակա չեն դրոշմավորման և իրացման որպես ոսկերչական և այլ իրեր: Այդպիսի իրերը չպետք է ունենան դրոշմների դրոշմվածք, որոնք իրենց տեսքով հիշեցնում են հարգորոշիչ դրոշմի կամ թանկարժեք մետաղների հարգադրոշմների նշաններ, որոնք չեն համապատասխանում թանկարժեք մետաղների ձուլվածքին, որոնցից

պատրաստվել են այդպիսի արտադրանքները: Սույն հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերությունում նշված ոսկերչական և այլ արտադրանքի նմուշահանման, հետազոտման ու դրոշմման հանդեպ պահանջներով կարող են նախատեսված լինել ոսկերչական և այլ իրերի պատրաստման ժամանակ ոչ թանկարժեք մետաղների կիրառման դեպքեր:

9. Մի անդամ պետության տարածքում հարգադրոշմով դրոշմավորված ոսկերչական ու այլ իրերը մյուս անդամ պետության տարածք տեղափոխվելու դեպքում կարող են կամավոր մատակարարվել այն անդամ պետության լիազոր մարմին, որի տարածք տեղափոխվել էին նշված արտադրանքները, փորձարկման, հետազոտման ու դրոշմավորման իրականացման նպատակով, եթե դա նախատեսված է այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածք տեղափոխվել են ոսկերչական և այլ իրերը:

10. Ոսկերչական և այլ իրերի նմուշահանումը, հետազոտումը և դրոշմավորումը, ինչպես նաև անվանանիշների հաշվառման (ռեեստրի) վարումն իրականացվում է անդամ պետության այն մարմնի (կազմակերպության) կողմից, որը լիազորված է իրականացնելու այն: Անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում ոսկերչական ու այլ իրերի նմուշահանում, հետազոտում և դրոշմավորում, ինչպես նաև անվանանիշների հաշվառման (ռեեստրի) վարում իրականացնելու լիազորությամբ կարող է հանդես գալ անդամ պետության այն մարմինը, որը լիազորված է իրականացնելու նորմատիվ իրավական կարգավորում թանկարժեք մետաղների ու թանկարժեք քարերի արտադրության, օգտագործման ու շրջանառության ոլորտում (այսուհետ՝ մարմին, որը լիազորված է նորմատիվ իրավական կարգավորման համար):

Անվանանիշների ծածկագրերը ամեն տարի սահմանվում են անդամ պետության այն մարմնի (կազմակերպության) կողմից, որը լիազորված է նմուշառման, հետազոտման ու դրոշմման համար, կամ այն մարմնի կողմից, որը լիազորված է նորմատիվ իրավական կարգավորման համար, և դրանց մասին

տեղեկությունը փոխանցվում է տվյալ անդամ պետության ոսկերչական և այլ տեսակի իրեր արտադրողներին, ինչպես նաև՝ եռամսյակը մեկ՝ այն մարմիններին, որոնք լիազորված են նորմատիվ իրավական կարգավորման համար, և այն մարմիններին (կազմակերպություններին), որոնք լիազորված են նմուշառման, հետազոտման ու դրոշմման համար:

11. Ոսկերչական և այլ իրերի վաճառքը (իրացումը), որոնք, սույն Համաձայնագրին համապատասխան, ենթակա են հարգադրոշմով դրոշմավորման, առանց այդպիսի դրոշմների դրոշմվածքի, արգելված է:

12. Ոսկերչական և այլ արծաթյա իրերը, որոնք պատրաստվել են անդամ պետության տարածքում, և որոնց նկատմամբ, այդ անդամ պետության օրենսդրության համապատասխան, դրոշմավորումն իրականացվում է կամավոր հիմունքներով, կարող են վաճառվել (իրացվել) տվյալ անդամ պետության տարածքում այդպիսի իրերի վրա անվանական դրոշմվածքի առկայության դեպքում: Վաճառքի (իրացման) նպատակով մյուս անդամ պետության տարածք այդպիսի իրերի տեղափոխման ժամանակ դրանք ենթակա են դրոշմավորման այն անդամ պետության հարգադրոշմով, որի տարածքից տեղափոխվել են:

13. Անդամ պետության իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը, որի տարածք մեկ այլ անդամ պետության տարածքից տեղափոխվել են ոսկերչական և այլ իրեր, այդ անդամ պետության նորմատիվ իրավական կարգավորման համար լիազոր մարմին են ներկայացնում տեղեկություն այդպիսի իրերի տեղափոխման մասին:

14. Անդամ պետության նորմատիվ իրավական կարգավորման համար լիազոր մարմինը, ոսկերչական և այլ իրերի մուտքի մասին, իրազեկում է այն անդամ պետության նորմատիվ իրավական կարգավորման համար լիազոր մարմինին, որի տարածքից տեղափոխվել են այդ իրերը: Տեղեկության պարունակությունը և այն փոխանակելու կարգը համաձայնեցվում են լիազոր մարմինների (կազմակերպությունների) կողմից:

15. Անդամ պետություններից մեկի կողմից ոսկերչական և այլ իրերի ծագման իսկության վերահսկողության և ոսկերչական ու այլ իրերի նույնականացման կարգի և շրջանառության բոլոր փուլերում դրանց շարժի հաշվառման ոլորտում տեղեկատվական համակարգի ներդրման դեպքում դրանց մասին տեղեկատվության բովանդակությունը, նման տեղեկատվական համակարգ փոխանցելու կարգն ու ժամկետները սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

## **Հոդված 12**

1. Նորմատիվ իրավական կարգավորման համար լիազոր մարմինները ապահովում են տեղեկատվության փոխանակում իրավական և այլ նորմատիվ իրավական ակտերի մասին, որոնք սահմանում են.

ա) թանկարժեք մետաղների ու թանկարժեք քարերի հետ գործունեության իրականացման կարգը, այդ թվում՝ արտադրության, թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի արտադրության, օգտագործման ու շրջանառության ոլորտում,  
բ) հարգադրոշմների նշանները:

2. Նորմատիվ իրավական կարգավորման համար լիազոր մարմինները ապահովում են հարգադրոշմների դրոշմվածքի նմուշների, դրանց նկարագրությունների, անվանանիշների ռեեստրների, ինչպես նաև այլ տեղեկությունների փոխանակումը սույն Համաձայնագրի իրականացման շրջանակում:

3. Նորմատիվ իրավական կարգավորման համար լիազոր մարմինը, իր անդամ պետության տարածք տեղափոխված ոսկերչական և այլ իրերի վերաբերյալ արտադրական պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում ապահովում է անդամ պետության նորմատիվ իրավական կարգավորման համար լիազոր մարմին, որի տարածքից տեղափոխվել էին այդ ոսկերչական և այլ իրերը, խախտումների բացահայտման վերաբերյալ տեղեկատվության տրամադրում: Խախտումների ցանկը, որոնց նկատմամբ իրականացվում է տեղեկատվության

փոխանակում նորմատիվ իրավական կարգավորման համար լիազոր մարմինների միջև, սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

Անդամ պետության նորմատիվ իրավական կարգավորման համար լիազոր մարմինը, որի տարածքից տեղափոխվել են ոսկերչական և այլ իրեր, ապահովում է միջոցառումների իրականացում այն անձանց վերահսկողության վերաբերյալ, որոնք նշված են բացահայտված խախտումների վերաբերյալ ներկայացված տեղեկատվության մեջ, և այդ խախտումների վերացման ուղղությամբ միջոցներ է ձեռնարկում՝ տվյալ անդամ պետության օրենսդրության համապատասխան:

Անդամ պետության նորմատիվ իրավական կարգավորման համար լիազոր մարմինը, որի տարածքում հայտնաբերվել են խախտումներ, վերահսկողական միջոցառումների շրջանակում ապահովում է ոսկերչական իրերի նմուշառման և հետազոտման իրականացում՝ այն արտադրողների և (կամ) մատակարարների հետ, որոնց կողմից 1 տարվա ընթացքում գրանցվել են խախտումներ:

Անդամ պետության նորմատիվ իրավական կարգավորման համար լիազորված մարմինը, որի տարածքից տեղափոխվել են ոսկերչական և այլ իրեր, ապահովում է անդամ պետության նորմատիվ իրավական կարգավորման համար լիազորված մարմին, տվյալ անդամ պետության օրենսդրության համապատասխան, ձեռնարկված միջոցառումների մասին տեղեկության փոխանցում այն անդամ պետության նորմատիվ իրավական կարգավորման համար լիազորված մարմին, որի տարածքում հայտնաբերվել են խախտումները:

Անդամ պետության նորմատիվ իրավական կարգավորման համար լիազորված մարմինը, որի տարածքում թանկարժեք քարերի տեղափոխման և (կամ) իրացման ժամանակ խախտումներ են հայտնաբերվել, իրականացնում է միջոցառումներ այդ խախտումների վերացման ուղղությամբ և հայտնաբերված խախտումների և իրականացված միջոցառումների մասին տեղեկացնում այն անդամ պետության նորմատիվ իրավական կարգավորման համար լիազորված մարմին, որի տարածքից փոխադրվել են թանկարժեք քարերը, որպեսզի բացահայտված

խախտումների կանխարգելման համար միջոցներ ձեռնարկվեն այն անդամ պետության օրենսդրության համաձայն, որի տարածքից տեղափոխվել են թանկարժեք քարերը:

Նորմատիվ իրավական կարգավորման համար լիազոր մարմինները ապահովում են միջոցների իրականացում, որպեսզի պարզեն ու վերացնեն խախտումների պատճառներն ու դրանց նպաստող պայմանները:

Նորմատիվ իրավական կարգավորման համար լիազոր մարմինները, առաջնորդվելով միջազգային պայմանագրերով և անդամ պետության օրենսդրությամբ, ձգտում են փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հակազդեցության հարցերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման՝ հաշվի առնելով փողերի լվացման դեմ պայքարի ֆինանսական միջոցառումների աշխատանքային խմբի հանձնարարականները (ՓԱՏՓ):

Անդամ պետություններն օգտագործում են սույն Համաձայնագրին համապատասխան ստացված տեղեկությունը՝ բացառապես սույն Համաձայնագրի իրականացման նպատակներով:

### **Հոդված 13**

1. Թանկարժեք մետաղների ու թանկարժեք քարերի ու դրանցից պատրաստված իրերի ապօրինի շրջանառության համար պատասխանատվության միջոցները կիրառվում են անդամ պետության օրենսդրության համապատասխան:

2. Անդամ պետությունները միջոցներ են ձեռնարկում՝ ներդաշնակեցնելու համար Միության շրջանակում թանկարժեք մետաղների ու թանկարժեք քարերի և դրանցից պատրաստված իրերի ապօրինի շրջանառության համար վարչական և (կամ) այլ պատասխանատվությունը: Միության շրջանակում թանկարժեք մետաղների ու թանկարժեք քարերի և դրանցից պատրաստված իրերի ապօրինի շրջանառության համար վարչական և (կամ) այլ պատասխանատվության ներդաշնակեցմանն ուղղված միջոցների ցանկն և դրանց իրականացման

ժամկետները սահմանվում են Հանձնաժողովի խորհուրդի կողմից՝ հաշվի առնելով սույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված տեսչական այցելությունների արդյունքները:

Թանկարժեք մետաղների ու թանկարժեք քարերի և դրանցից պատրաստված իրերի շրջանառության պետական հսկողությունը (վերահսկողությունը) կատարվում է համաձայն սույն Համաձայնագրի 3-րդ հավելվածի Հիմնական պահանջների:

3. Սույն Համաձայնագրի դրույթներին անդամ պետությունների կատարմանը ծանոթանալու նպատակով իրականացվում են սկզբնական տեսչական այցելություններ:

Ուղղող գործողություններ իրականացնելու, ինչպես նաև թանկարժեք մետաղներից և թանկարժեք քարերից պատրաստված ոսկերչական և այլ իրերի արտադրության և շրջանառության ոլորտում պետական հսկողության (վերահսկողության) առկա մեխանիզմների կատարելագործմանն ուղղված լավագույն փորձի փոխանակման նպատակով իրականացվում են պարբերական տեսչական այցելություններ:

Սկզբնական տեսչական այցելություններն անցկացվում են տեսչական այցելությունների իրականացման ժամանակացույցի համաձայն, որը ձևավորվում է անդամ պետությունների լիազոր մարմինների (կազմակերպությունների) առաջարկների հիման վրա և հաստատվում է Հանձնաժողովի Կոլեգիայի կողմից: Սկզբնական տեսչական այցելություններն անցկացվում են սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 6 ամսվա ընթացքում: Պարբերական տեսչական այցելություններն իրականացվում են ոչ պակաս, քան 5 տարին 1 անգամ:

Տեսչական այցելություններն իրականացվում են տեսչական խմբի կողմից, որի կազմում ընդգրկվում են անդամ պետությունների լիազոր մարմինների (կազմակերպությունների) և Հանձնաժողովի ներկայացուցիչները՝ ներառյալ նշված մարմինների (կազմակերպությունների) ղեկավարների տեղակալները:



Սկզբնական (կրկնակի) տեսչական այցի արդյունքներով կազմվում է համապատասխան եզրակացություն:

Պարբերական տեսչական այցի արդյունքներով կազմվում է խորհրդատվություն:

Եթե անդամ պետություններից մեկի կողմից ստացվում է սկզբնական տեսչական այցի արդյունքներով բացասական եզրակացություն, կրկնակի այցը իրականացվում է ոչ ուշ, քան տեսչական այցելություններ իրականացնելու ժամանակացույցով նախատեսված վերջին սկզբնական տեսչական այցի ավարտի օրվանից 1 ամիս հետո:

Տեսչական խմբի կազմը, եզրակացության ձևը և եզրակացության մեջ արտացոլման ենթակա տեղեկությունների ցանկը հաստատվում են Հանձնաժողովի Խորհրդի կողմից:

#### **Հոդված 14**

Սույն Համաձայնագրի 11-րդ հոդվածի 1-3-րդ, 6-9-րդ, 11-րդ, 13-րդ և 14-րդ կետերը կիրառվում են անդամ պետությունների կողմից՝ Հանձնաժողովի Խորհրդի որոշման ուժի մեջ մտնելու օրվանից, որը կիրառվում է բոլոր անդամ պետությունների նկատմամբ սույն Համաձայնագրի 13-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված սկզբնական տեսչական այցելությունների արդյունքով ստացված դրական եզրակացությունների հիման վրա:

#### **Հոդված 15**

Վեճերը՝ կապված սույն Համաձայնագրի մեկնաբանության և (կամ) կիրառման հետ, լուծվում են Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով սահմանված կարգով:

## Հոդված 16

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են առանձին արձանագրություններով:

## Հոդված 17

Սույն Համաձայնագիրը միջազգային պայմանագիր է՝ կնքված Միության շրջանակում, և մտնում է Միության իրավասության մեջ:

## Հոդված 18

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում անդամ պետությունների կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ավանդապահի ստացման օրվանից 10 օրացուցային օր հետո:

Կատարված է Մոսկվա քաղաքում 2019 թ. նոյեմբերի 22-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում, որը, հանդիսանալով սույն Համաձայնագրի ավանդապահը, յուրաքանչյուր անդամ պետությանը կուղարկի դրա հաստատված պատճենը:

Հայաստանի	Բելառուսի	Ղազախստանի	Դրոզստանի	Ռուսաստանի
Հանրապետության	Հանրապետության	Հանրապետության	Հանրապետության	Դաշնության
կողմից	կողմից	կողմից	կողմից	կողմից

## Հավելված 1

«Եվրասիական տնտեսական միության  
շրջանակներում թանկարժեք մետաղների և  
թանկարժեք քարերի հետ գործառնությունների  
իրականացման առանձնահատկությունների  
մասին» համաձայնագրի

ԿԱՐԳ

Ոսկերչական և այլ իրերի պատրաստման համար ոչ պիտանի

## Թանկարժեք քարերի դասակարգման

1. Սույն Կարգը սահմանում է ոսկերչական և այլ իրերի պատրաստման համար ոչ պիտանի թանկարժեք քարերի դասակարգման չափորոշիչներն ու կանոնները:

2. Սույն Կարգում օգտագործվող հասկացությունները կիրառվում են այն իմաստներով, որոնք սահմանված են «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի հետ գործառնություններ իրականացնելու առանձնահատկությունների մասին» համաձայնագրի 1-ին հոդվածով:

3. Ոսկերչական և այլ իրերի պատրաստման համար ոչ պիտանի թանկարժեք քարերի դասակարգման չափորոշիչներ են հանդիսանում դրանց չափային, գունային և որակական հատկանիշները:

4. Ոսկերչական և այլ իրերի պատրաստման համար ոչ պիտանի թանկարժեք քարերի շարքին են դասվում.

ա) ընդերքից հանված բնական ադամանդները, որոնք պատկանում են «բորտ» և «հորատում» դիրքերին՝ անկախ իրենց չափաքաշային խմբից,

բ) թանկարժեք քարերի մնացորդները՝

«-3+2» և ավելի ցածր մաղավոր դասի բազմաշերտ ադամանդային գործիքով վերականգնված բնական ադամանդները,

«-3+2» և ավելի ցածր մաղավոր դասի բնական ադամանդների ցանկացած տեսակի վերամշակման արդյունքում առաջացող թափոնները,

թանկարժեք քարերի փշրանքը, ինչպես նաև այն թափոնները, որոնք առաջանում են թանկարժեք քարի ցանկացած տեսակի վերամշակման արդյունքում (բացի բնական ադամանդներից), 2 մմ-ից պակաս գծային չափերով:

5. Թանկարժեք քարերի սորտավորման, նախնական դասակարգման և նախնական գնահատման հաստատված կարգին համապատասխան՝ ոսկերչական

և այլ իրերի պատրաստման համար ոչ պիտանի «բորտ» և «հորատում» դիրքերի՝ ընդերքից հանված բնական ադամանդների դասակարգումն իրականացվում է թանկարժեք քարերի սորտավորում, նախնական դասակարգում և նախնական գնահատում իրականացնող կազմակերպությունների կողմից:

6. Ոսկերչական և այլ իրերի պատրաստման համար ոչ պիտանի թանկարժեք քարերի թափոնների դասակարգումն իրականացվում է այն իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց կողմից, որոնք գրանցված են որպես թանկարժեք քարեր ձեռք բերող և օգտագործող անհատ ձեռնարկատերեր:

Սույն Կարգով սահմանված չափանիշներին թանկարժեք քարերի թափոնների հատկանիշների համապատասխանեցման դասակարգումն իրականացվում է այնպիսի չափման միջոցների և սարքավորումների կիրառմամբ, որոնք անցել են ստուգում և կալիբրացիա՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետության՝ չափման միասնականության ապահովման մասին օրենսդրության պահանջներին համապատասխան:

Բազմաշերտ ադամանդային գործիքից վերականգնված բնական ադամանդների, ինչպես նաև բնական ադամանդների ցանկացած տեսակի վերամշակման արդյունքում առաջացող թափոնների ցանցային դասակարգումը որոշվում է ցանցերով մաղելու եղանակով:

Թանկարժեք քարերի փշրանքի, ինչպես նաև թանկարժեք քարերի (բացի բնական ադամանդներից) ցանկացած տեսակի վերամշակման արդյունքում առաջացող մնացորդների գծային չափերը հաստատվում են չափման միջոցների օգնությամբ՝ ոչ ավել, քան 0,1 մմ շեղումով:

## Հավելված 2

«Եվրասիական տնտեսական միության  
շրջանակներում թանկարժեք մետաղների և  
թանկարժեք քարերի հետ գործառնությունների  
իրականացման առանձնահատկությունների  
մասին» համաձայնագրի

## ԿԱՐԳ

Նախքան զտումը թանկարժեք մետաղներ պարունակող հանքային հումքի հետ  
գործառնությունների իրականացման

1. Սույն Կարգը կարգավորում է թանկարժեք մետաղներ պարունակող հանքային հումքի (այսուհետ՝ հանքային հումք) սեփականատերերի և շուկայի մյուս մասնակիցների միջև հարաբերությունները՝

ա) հանքային հումքում թանկարժեք մետաղների ֆիզիկական վիճակի կամ պարունակության փոփոխման դեպքում, արդյունահանման, հարստացման և մետալուրգիական վերափոխման ժամանակ նախքան զտումը,

բ) հանքային հումքի և հանքային հումքի վերամշակման արտադրանքների նկատմամբ սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների փոխանցման դեպքում,

գ) հանքային հումքի և հանքային հումքի վերամշակման արտադրանքների տեղափոխման և պահպանման դեպքում:

2. Սույն Կարգում օգտագործվող հասկացությունները կիրառվում են այն իմաստներով, որոնք սահմանված են «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի հետ գործառնություններ իրականացնելու առանձնահատկությունների մասին» համաձայնագրի 1-ին հոդվածով:

3. Սույն Կարգը չի տարածվում այն թանկարժեք մետաղների բնակտորների հետ գործողությունների վրա, որոնք պատկանում են եզակի դասի և ենթակա չեն զտման:

4. Հանքային հումքում թանկարժեք մետաղների ֆիզիկական վիճակի կամ պարունակության փոփոխությունն իրականացվում է հարստացման և ոսկեզատման գործարաններում և մետալուրգիական արտադրություններում ընդերքից հանվող հանքաքարի վերամշակման գործընթացում, լվացման սարքավորումներում և սարքերում ավազի լվացման ժամանակ, սիկահարստացման գործարաններում և սարքավորումներում, կենտրոնացված և ստորգետնյա տարալվացման կայաններում, հանքային հումքի վերամշակման այլ օբյեկտներում կոնցենտրատների վերջնական մշակման ժամանակ:

5. Հանքային հումքի սեփականատերը հանքային հումքի յուրաքանչյուր խմբաքանակի համար ձևակերպում է անձնագիր, որում նշվում են.

- ա) հանքային հումքի անվանումը,
- բ) խմբաքանակի համարը,
- գ) խմբաքանակի քաշը (բնական և չոր տեսքով),
- դ) խոնավությունը,
- ե) վտանգավոր և այլ վերահսկվող խառնուրդների պարունակությունը,
- զ) թանկարժեք մետաղների պարունակությունը,
- է) թանկարժեք մետաղների քանակը,
- ը) հանքային հումքի որակը բնութագրող այլ պարամետրերը:

6. Հանքային հումքը, որը ծանրաբեռնված չէ նախկինում կնքված՝ զտված թանկարժեք մետաղների մատակարարման մասին պայմանագրերին (կոնտրակտներին) համապատասխան պարտավորություններով, կարող է իրացվել Եվրասիական տնտեսական միության անդամ պետության (այսուհետ՝ անդամ պետության) օրենսդրության համապատասխան՝ նախքան զտումը թանկարժեք մետաղների արտադրության և (կամ) դրա արդյունահանման սուբյեկտների կողմից այն իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց, որոնք գրանցված են որպես անհատ ձեռնարկատեր, այդ թվում՝ թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի բորսայի միջոցով:

Հանքային հումքը կարող է օգտագործվել որպես գրավ՝ համաձայն անդամ պետության օրենսդրության:

7. Հանքային հումքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման, ինչպես նաև որպես գրավ օգտագործելու հետ կապված գործարքները ձևակերպվում են համապատասխան պայմանագրերով (կոնտրակտներով) և ենթակա են հաշվառման «Եվրասիական տնտեսական միության թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի հետ գործառնություններ իրականացնելու առանձնահատկությունների մասին» համաձայնագրի 5 հոդվածի համաձայն:



8. Հանքային հումքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման հետ կապված պայմանագրերում (կոնտրակտներում) պարտադիր կերպով նշվում են.

- ա) հանքային նյութի անվանումը,
- բ) մատակարարման ծավալներն ու ժամկետները (ժամանակացույցը),
- գ) թանկարժեք մետաղների քանակը քիմիապես մաքուր տեսքով,
- դ) թանկարժեք մետաղների գինը քիմիապես մաքուր տեսքով զանգվածի միավորի համար և դրանց ընդհանուր արժեքը՝ ըստ պայմանագրի (կոնտրակտի),
- ե) մատակարարման և վճարման կարգն ու պայմանները,
- զ) հանքային հումքի փոխանցման և ընդունման պայմանները,
- է) կողմերի պատասխանատվությունը:

9. Հանքային հումքի գները սահմանվում են դրա սեփականատիրոջ կողմից ինքնուրույն՝ հաշվի առնելով անդամ պետությունների ազգային (կենտրոնական) բանկերի կողմից սահմանվող գները կամ հաշվի առնելով գների գնանշումը, որոնք սահմանվում են թանկարժեք մետաղների շուկայի մասնակիցների լոնդոնյան ասոցիացիայի (LBMA) կողմից՝ ոսկու, արծաթի համար, պլատինի և պալադիումի լոնդոնյան շուկայի մասնակիցների (LPPM) կողմից՝ պլատինի և պալադիումի համար, կամ հաշվի առնելով այն գները, որոնք սահմանվում են անդամ պետության օրենսդրությամբ դրա համար լիազորված մարմինների (կազմակերպությունների) կողմից՝ իրիդիումի, ռոդիումի, ռուտենիումի և օսմիումի համար:

10. Հանքային հումքի սեփականատերն ապահովում է այդ հումքում պարունակվող թանկարժեք մետաղների պահպանվածությունը դրա արդյունահանման, վերամշակման և փոխադրման բոլոր փուլերում՝ անդամ պետության օրենսդրության համապատասխան:

### Հավելված 3

«Եվրասիական տնտեսական միության  
շրջանակներում թանկարժեք մետաղների և  
թանկարժեք քարերի հետ գործառնությունների  
իրականացման առանձնահատկությունների  
մասին» համաձայնագրի

#### Հիմնական պահանջներ

թանկարժեք մետաղներից և թանկարժեք քարերից պատրաստված ոսկերչական և  
այլ իրերի արտադրության և շրջանառության ոլորտում պետական հսկողության  
(վերահսկողություն) նկատմամբ

1. Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում  
(այսուհետ՝ անդամ պետություններ) «Եվրասիական տնտեսական միության  
շրջանակներում թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի հետ  
գործառնություններ իրականացնելու առանձնահատկությունների մասին»  
համաձայնագրի դրույթների իրականացման նպատակներով ապահովվում է.

ա) ոսկերչական և այլ իրերի արտադրության և շրջանառության ոլորտում հիմնական օրենքի առկայությունը,

բ) այլ նորմատիվ իրավական ակտերի առկայությունը ոսկերչական և այլ իրերի արտադրության, օգտագործման և շրջանառության ոլորտում, հետազոտումը և բրենդինգի, ինչպես նաև ստուգումներ անցկացնելու հարցերի ստուգումը,

գ) նորմատիվ իրավական ակտերի առկայությունը, որոնք նախատեսում են անդամ պետության տարածք փոխադրված ոսկերչական և այլ իրերի նկատմամբ պարտադիր պահանջների խախտման համար վարչական և (կամ) այլ պատասխանատվության միջոցներ,

դ) լիազոր մարմնի առկայությունը, որը պատասխանատու է ոսկերչական և այլ իրերի արտադրության, օգտագործման և շրջանառության պետական քաղաքականության իրականացման համար, և (կամ) այլ մարմինների (կազմակերպությունների) առկայությունը, որոնք լիազորված են դրա իրականացման համար՝ անդամ պետության օրենսդրության համապատասխան (այսուհետ՝ լիազորված մարմին (կազմակերպություն)):

2. Լիազոր մարմինը (կազմակերպությունը) և նրա աշխատողներն իրավունք չունեն իրականացնելու ոսկերչական և այլ իրերի պատրաստման և (կամ) վաճառքի ձեռնարկատիրական գործունեություն, ինչպես նաև ստեղծելու ոսկերչական և այլ իրերի պատրաստման և (կամ) վաճառքի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կազմակերպություններ կամ դառնալու այդպիսի կազմակերպությունների անդամներ:

3. Թանկարժեք մետաղներից և թանկարժեք քարերից պատրաստված ոսկերչական և այլ իրերի արտադրության և շրջանառության ոլորտում պետական հսկողությունը (վերահսկողությունը) իրականացվում է անդամ պետության օրենսդրության համապատասխան՝ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված (այսուհետ՝ անհատ ձեռնարկատեր) իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց ստուգումներ կազմակերպելու և անցկացնելու, խախտումների

կանխարգելիչ միջոցառումներ և (կամ) վերացման մասով անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված միջոցների ձեռնարկման, արտադրության ոլորտում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից իրենց գործունեության իրականացման ընթացքում պարտադիր պահանջների կատարման վերլուծության եղանակով:

4. Լիազոր մարմնի (կազմակերպության) կողմից, անդամ պետության օրենսդրության համապատասխան, իրականացվում է.

ա) իր լիազորությունների շրջանակներում պետական հսկողություն (վերահսկողություն) իրականացնելու հետ կապված հարաբերությունների նորմատիվ իրավական և մեթոդական ապահովում,

բ) լիազոր մարմինների (կազմակերպությունների) գործունեության կազմակերպում և համակարգում, եթե դա նախատեսված է անդամ պետության օրենսդրությամբ,

գ) պետական հարգորոշման վերահսկողության իրականացման դիտանցում՝ դրա արդյունքների և արդյունավետության գնահատման, ինչպես նաև անդամ պետության տարածքում ոսկերչական և այլ իրերի շրջանառության նպատակով,

դ) անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված միջոցների ձեռնարկում բացահայտված խախտումների կանխարգելման և (կամ) վերացման նպատակով,

ե) պարտադիր պահանջների կատարման վերլուծություն իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից ոսկերչական և այլ իրերի արտադրություն, օգտագործում և շրջանառություն իրականացնելիս,

զ) անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

5. Լիազոր մարմինը (կազմակերպությունը) իրականացնում է.

ա) ոսկերչական և այլ իրերի փորձարկում, հետազոտում և դրոշմում՝ «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի հետ գործառնություններ իրականացնելու

առանձնահատկությունների մասին» համաձայնագրի 11-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերությունում նշված՝ ոսկերչական և այլ իրերի փորձարկման, հետազոտման և դրոշմման պահանջներին համապատասխան,

բ) անդամ պետության օրենսդրության համաձայն՝ հարգորոշիչ դրոշմների և անվանումների դրոշմվածքի փորձաքննություն, ոսկերչական և այլ իրերի փորձաքննություն,

ոսկերչական և այլ իրերի ստուգիչ հետազոտում և փորձաքննություն արբիտրաժային գործերի մասով,

այլ միջոցառումներ:

6. Բացի անդամ պետության օրենսդրության համապատասխան ստուգում իրականացնելու համար նախատեսված հիմքերից, «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի հետ գործառնություններ իրականացնելու առանձնահատկությունների մասին» համաձայնագրի 12-րդ հոդվածի համաձայն, ստուգումներ են իրականացվում այն ժամանակ, երբ մի անդամ պետության լիազոր մարմինը (կազմակերպությունը) դիմում է ստանում մյուս անդամ պետության լիազոր մարմնից (կազմակերպությունից) այդ մյուս անդամ պետության տարածք փոխադրված ոսկերչական և այլ իրերի նկատմամբ պարտադիր պահանջների խախտումների փաստերի վերաբերյալ:

**Ղրղզստանի Հանրապետության վերապահումը «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի հետ գործառնությունների իրականացման առանձնահատկությունների մասին» համաձայնագրի վերաբերյալ**

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի հետ գործառնությունների իրականացման առանձնահատկությունների մասին» համաձայնագրի 7-րդ հոդվածի դրույթները Ղրղզստանի Հանրապետության վրա տարածվելու են Քիմբերլիի գործընթացի սերտիֆիկացման միջազգային ծրագրի լիիրավ մասնակից դառնալուց հետո:

**Ղրղզստանի Հանրապետության  
վարչապետ**

**Մ.Դ. Աբիլգազին**

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2019 թվականի նոյեմբերի 22-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի հետ գործառնությունների իրականացման առանձնահատկությունների մասին» համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



Հայաստանի Հանրապետության  
արտաքին գործերի նախարարություն